


«Ունիսոն»

հասարակական կազմակերպություն

Առցանց լրատվության մոնիտորինգ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սույն մոնիտորինգը և  
հաշվետվության հրապարակումն  
իրականացվել են  
Բաց Հասարակության Հիմնադրամներ -  
Հայաստանի աջակցությամբ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....                                 | 3  |
| ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....               | 4  |
| ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....                     | 6  |
| ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ..... | 11 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1.....                                   | 13 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2.....                                   | 14 |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լրատվությունը, փոխանցելով տեղեկատվություն, ընդունակ է վերաբերմունք ձևավորել այս կամ այն երևույթի, իրադարձության, սոցիալական խմբի հանդեպ: Փաստացի լրատվությունը հանդիսանում է այն հայելին, որում արտացոլվում են հասարակական երևույթները: Թյուր, ոչ ամբողջական, միակողմանի մեկնաբանությունը կարող է ստեղծել հասարակության աղճատված պատկեր: Այդ պատճառով շատ կարևոր է դառնում լրատվամիջոցների գրագիտությունը և տեղեկատվությունը ճիշտ մատուցելու կարողությունը:

Չանգվածային լրատվությունը իր մեջ ներառում է հեռուստատեսությունը, տպագիր մամուլը, ռադիոն: Սակայն մեր ժամանակներում այս բոլորը կարելի է գտնել համացանցում: Դրան ավելացել են նաև բլոգերը, և նույնիսկ սոցիալական ցանցերը կարող են հանդես գալ որպես տեղեկատվության փոխանցման եղանակ: Ինտերնետն այսօր հանդիսանում է տեղեկատվություն ստանալու և փոխանցելու առավել արագ և կիրառվող միջոցը: Այս պատճառով հատկապես արդիական է տեղեկատվության փոխանցման հենց այդ եղանակի ուսումնասիրությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, հաշմանդամությունը զարգացող հասկացություն է, որը ձևավորվում է մարդկանց ֆունկցիոնալ խանգարումների և վերաբերմունքային ու միջավայրի խոչընդոտների համագործակցության արդյունքում: Այս սահմանումից ակնհայտ է դառնում, որ հաշմանդամության հասկացության ձևավորման վրա էական ազդեցություն է թողնում հասարակական կարծիքը: Վերջինիս ձևավորման գործում թերևս դժվար է թերագնահատել լրատվության դերը:

Մեդիան ընդունակ է ստեղծել հաշմանդամության որոշակի պատկեր, որի շրջանակներից դուրս գալը կարող է շատ խնդրային լինել անհատի համար: Մյուս կողմից, ոչ խտրական, գրագետ լուսաբանումը կարող է ներառական հասարակության կառուցման կարևորագույն գործիքներից մեկը դառնալ:

Ելնելով վերոհիշյալից, «Ունիտոն» հասարակական կազմակերպությունը 2015 թվականի հունիս-օգոստոս ամիսներին անցկացրեց առցանց լրատվամիջոցների հրապարակումների մոնիտորինգ՝ դուրս բերելու համար հաշմանդամության թեմայի լուսաբանման առանձնահատկությունները և խնդիրները: Մոնիտորինգը իրականացվեց Բաց Հասարակություն Հիմնադրամներ - Հայաստանի աջակցությամբ:

Սույն հաշվետվությունը կազմված է 5 մասից՝ ներածություն, մեթոդաբանության նկարագրություն, տվյալների վերլուծություն, ստացված տվյալների հիման վրա մշակված հանձնարարականներ, հավելված:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդաբանությունը կառուցվել է սահմանված նպատակից ելնելով, այն է՝ դուրս բերել մեղիա հրապարակումները, որոնք խտրական են կամ նպաստում են խտրական վերաբերմունքի զարգացմանը՝ հաշմանդամության կարծրատիպային և խարանավորող պատկերման, սխալ տեղեկատվության տրամադրման, բացասական տերմինաբանության օգտագործման արդյունքում:

Նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

- կազմել լրատվամիջոցների հրապարակումների մոնիտորինգի գործիք,
- իրականացնել բուն հետազոտությունը,
- մուտքագրել ստացված տվյալները,
- կատարել ստացված տվյալների թվային վերլուծություն,
- կատարել ստացված տվյալների որակական վերլուծություն,
- վերլուծության արդյունքների հիման վրա կազմել հանձնարարականներ:

Դիտարկման մեջ ներառվել են 2014 թվականի մայիսի 1-ից մինչև 2015 թվականի օգոստոսի 31-ը կատարված հրապարակումները: Դիտարկվել են ինչպես բուն ինտերնետային լրատվամիջոցներ (առցանց թերթեր, բլոգեր, ալիքներ), այնպես էլ հեռուստահաղորդումների և տպագիր մամուլի կողմից ցանցում տեղադրված նյութերը: Google որոնողական համակարգի միջոցով փնտրվել են հաշմանդամության թեմային առնչվող հրապարակումները: Յուրաքանչյուր հրապարակում գնահատվել է տվյալ մոնիտորինգի համար հատուկ կազմված դիտարկման քարտի միջոցով (տե՛ս Հավելված 1): Հրապարակումներին տրվել է ընդհանրական գնահատական 3 բալանոց սանդղակի միջոցով, որտեղ 1՝ լավ, 2՝ միջին, 3՝ վատ: 1 բալով գնահատվել են այն հրապարակումները, որտեղ չի հայտնաբերվել խտրական վերաբերմունք, օգտագործված է եղել ճիշտ տերմինաբանություն և տեղեկատվությունը համապատասխանել է իրականությանը: 2 բալով գնահատվել են նյութերը, որոնք թեև չեն պարունակել խտրական վերաբերմունք, սակայն կառուցվածքի մեջ ունեցել են որոշակի սխալներ: 3 բալով գնահատվել են ակնհայտորեն խտրական, անձի արժանապատվությունը թերագնահատող, կոպիտ տերմինաբանական սխալներ պարունակող նյութերը: Բացի այդ, յուրաքանչյուր նյութի համար (բացառությամբ 1 բալով գնահատվողների) դուրս են բերվել կատարված սխալները: Առանձնացվել են սխալների հետևյալ խմբավորումները՝

- կարծրատիպերի առկայություն,
- կարծրատիպերի ձևավորում,
- սխալ տերմինաբանություն,
- վիճակագրական սխալ,
- թյուր ինֆորմացիա,
- կարծրատիպային պատկերներ,

- կարծրատիպային երաժշտություն,
- կարծրատիպային շեշտադրումներ,
- նյութի և պատկերի անհամապատասխանություն:

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև լրատվամիջոցի այն բաժնին, որտեղ տեղադրվել է հաշմանդամության թեմայի հետ առնչվող նյութը:


Ստացված տվյալների թվային վերլուծությունը կատարվել է MS Access և MS Excel ծրագրերի միջոցով:

Հետազոտության շրջանակներում դիտարկվել է ընդհանուր առմամբ առցանց մեդիայի 203 հրապարակում, որոնցից 108-ը հոդվածներ էին, 79-ը՝ տեսանյութեր, 9-ը՝ բլոգում գրառումներ, 7-ը՝ այլ տիպի նյութեր՝ ռադիոհաղորդում և հայտարարություններ:

## ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Նախևառաջ կարևոր է խոսել օնլայն լրատվամիջոցների ընդհանուր մատչելիության մասին: Դիտարկված 79 տեսանյութերից 14-ը և 1 ռադիոհաղորդումը զուգակցվում էին գրավոր տեքստով, որը հարմար է հատկապես լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Սակայն հարմարեցման որևէ այլ միջոցներ (ձայնային ազդանշաններ, հոդվածների աուդիոտարբերակներ, սուրդոթարգմանություն, խոշոր տառատեսակ և այլն) մենք չհանդիպեցինք:

Բոլոր նյութերը գնահատվել են ընդհանրական 3 բալանոց սանդղակով (տե՛ս Հետազոտության մեթոդաբանություն): Արդյունքում ստացանք հետևյալ պատկերը (տե՛ս Գծապատկեր 1).




Գծապատկեր 1. Դիտարկված նյութերի բաշխումն ըստ ընդհանրական գնահատականի

Ինչպես պարզ է դառնում Գծապատկեր 1-ից, դիտարկված հրապարակումներից 93-ը գնահատվել են որպես վատ, 27-ը՝ միջին և 83-ը՝ լավ: Այսպիսով, դիտարկված հրապարակումների մեծամասնությունը կրել է այս կամ այն տեսակի խտրական պարունակություն: Ընդ որում, եթե տեսանյութերի 37,9%-ն է գնահատվել որպես բացասական, ապա հոդվածների մեջ այդ տոկոսը կազմել է 44,4% (տե՛ս Գծապատկեր 2): Սա այն դեպքում, երբ գրավոր նյութի կազմումն ավելի շատ ժամանակ է տալիս լրագրողին այն մտածված կերպով կառուցելու համար:




Գծապատկեր 2. Բացասական գնահատական ստացած նյութերի տոկոսային բաշխում

Ընդհանուր առմամբ, վատ կամ միջին գնահատականի են արժանացել դիտարկված 203 նյութից 120-ը՝ զգալի մեծամասնությունը: Դրանցից 68-ի (սխալների 56,6%) դեպքում հայտնաբերվել է մեկ տեսակի սխալ (օրինակ՝ սխալ տերմինաբանության կիրառում), մնացած 52-ի դեպքում (43,4%)՝ մեկից ավելի (տե՛ս Գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Դիտարկված նյութերում հայտնաբերված սխալների բաշխում՝ ըստ տոկոսային հարաբերակցության

Հանդիպող սխալների քանակական վերլուծության արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը.



Գծապատկեր 4. Գիտարկված նյութերում հանդիպող սխալների քանակական բաշխում

Ինչպես պարզ է դառնում Գծապատկեր 4-ից, առավել հաճախ հանդիպող խնդիրներից մեկը սխալ տերմինաբանության կիրառումն է: Ընդ որում, հաճախակի լրագրողները ոչ միայն իրենք են կիրառում սխալ տերմին, այլև հարցազրույցի արձարձման ընթացքում փոփոխում են անձի խոսքերը: Օրինակ՝ անձը հարցազրույցի ընթացքում օգտագործել է «հաշմանդամ» բառը, բայց լրագրողը հողվածում փոխարինել է այն «սահմանափակ կարողություններով անձ» արտահայտությամբ՝ հավանաբար կարծելով, որ դա է ճիշտ տարբերակը: Հայկական Wikipedia-ի հողվածներից մեկում «հաշմանդամություն» տերմինը վերցրած է չակերտների մեջ՝ որպես ոչ ճիշտ, փոխարենը օգտագործվում է կարծրատիպային «սահմանափակ կարողություններով անձ» արտահայտությունը (հողվածը նվիրված է հաշմանդամների հողգեբանական առանձնահատկություններին): Հաճախ են հանդիպում նաև «սայլակին գամված», «այս կամ այն հիվանդությամբ տառապող» (օրինակ՝ էպիլեպսիայով), «մտավոր հետամնաց», «հողգեկան հիվանդ», «առողջ» (որպես հաշմանդամի հականիշ), «խնդրով երեխա» (այս կամ այն տեսակի հաշմանդամություն ունեցող երեխայի մասին): Նման արտահայտություններ կիրառվում են ոչ միայն պրոֆեսիոնալ լրագրողների կողմից, այլև կազմակերպությունների կայքերում և անհատների բլոգերում: Օրինակ՝ հողգեբանական մի բլոգում գրվում է «չափահաս մտավոր հետամնաց երեխաներ» (խոսքը մտավոր խնդիրներ ունեցող անձանց մասին է), կամ կազմակերպությունը իրականացնում է ծրագիր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող երեխաների ներառմանը, բայց կիրառում է «սահմանափակ կարողություններով անձ» արտահայտությունը: Հետուստալիքներից մեկը իր տեսանյութի անոնսում ոչ միայն օգտագործել է «սահմանափակ կարողություններով անձ» արտահայտությունը, այլև ներառական բառը վերցրել չակերտների մեջ (խոսքը գնում է ներառական խաղահրապարակի բացման



մասին): Բացի այդ, «հաշմանդամ» տերմինը հաճախ կիրառվում է որպես խնդրայինի հոմանիշ, օրինակ «հոգով հաշմանդամ» (խոսքը գնում է բնավորության խնդիրների մասին): Շատ է հանդիպում «նման» բառի անտեղի կիրառումը՝ «Ձեր համար սկզբունքային հարց էր ընդունել նման մարդկանց», «Հենասայլակով մարդու համար պայման չկա, բայց թաղամասում, բարեբախտաբար, նման մարդ չկա»: Հաշմանդամների մասին խոսելիս հաճախ կիրառվում է «նրանք» դերանունը՝ այսպիսով բաժանելով հասարակությունը «մենք»-ի և «նրանք»-ի:

Խտրական տերմինաբանությամբ հատկապես հարուստ են մենտալ հաշմանդամության հետ կապված նյութերը՝ «հոգեկանը», «մտավոր հետամնացը», «ոչ լիարժեք» (խոսքը մտավոր խնդիրներ ունեցող անձանց մասին է): Հոգեկան հիվանդությունը հաճախ կիրառվում է որպես վիրավորանք: Օրինակ, հայտնի գործիչներից մեկը, ցանկանալով իր հակակրանքն արտահայտել մեկ այլ սոցիալական խմբի հանդեպ, օգտագործել է հետևյալ արտահայտությունը. «Եթե համարենք, որ այդ մարդիկ հիվանդ են, նրանց կարելի է բուժել և այդ առումով իմ հակակրանքը հասկանալի է: Ինչպես հոգեկան հիվանդն է հակակրանք առաջացնում, այնպես էլ նման երևույթները»:

Լսողական խնդիրներ ունեցող անձինք գրեթե համատարած անվանվում են «խուլեր» (որպես գոյական), իսկ տեսողական խնդիրներ ունեցողները՝ «կույրեր» (որպես գոյական):

Հատկապես հետաքրքրաշարժական են այն հոդվածները, որտեղ խոսքը գնում է հաշմանդամների ներառման, անկախ կյանքի, ինքնադրսևորման հնարավորությունների մասին, սակայն այդ ամենը արվում է սխալ տերմինաբանության միջոցով: Նման սխալներ երբեմն հանդիպում են նաև կրթական նյութերում, օրինակ՝ խոսվում է հաշմանդամների հետ շփման էթիկայի կանոնների մասին և օգտագործվում «սահմանափակ կարողություններով անձ» արտահայտությունը:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել հաշմանդամության հանդեպ երկու ծայրահեղական վերաբերմունք, որոնք արձածվում են լրատվամիջոցներում՝ «խղճահարություն» և «հերոսացում»: Մի կողմից, հաշմանդամությունը և անկարողությունը դիտարկվում են որպես հոմանիշ, իսկ սոցիալապես անբարենպաստ պայմանները ընդգծելու համար հաճախ նշվում է, որ ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունի: Նման համատեքստում հաշմանդամությունը հաճախ օգտագործվում է որպես օգնություն ստանալու միջոց: Մյուս կողմից, հաշմանդամություն ունեցող անձի՝ ակտիվ կյանքի ուղղված ցանկացած քայլ (օրինակ՝ պար, կրթություն, մեքենա վարել) կարող է դիտարկվել որպես շատ մեծ նվաճում: Նման նյութերը, որպես կանոն, սկսվում են «չնայած հաշմանդամությանը» արտահայտությամբ: Այս ծայրահեղականացված հիացմունքը կարծես արտահայտում է վատ թաքցրած զարմանքը, որ հաշմանդամը կարող է որևէ ակտիվ գործողություն ձեռնարկել: Հաշմանդամի ակտիվությունը կարող է դիտարկվել որպես ամոթանք պասիվ ոչ հաշմանդամների համար՝ «Շատ ենք բողոքում, որ հոգնած ենք, ու այդ դեպքում պետք է հիշենք Ն.-ի նման քաջ և ուժեղ մարդկանց»: Ենթատեքստը ընթերցվում է հետևյալ կերպ՝ եթե **նույնիսկ** այս մարդը կարող է...: Կամ համեմատվում են հաշմանդամության տեսակները՝

«Տեսնում ես ավելի ծանր խնդրով երեխաների»: Այս դեպքում հաշմանդամության մի տեսակը օգտագործվում է որպես «մխիթարանք» մյուսի համար:

Եվս մեկ՝ ոչ այդքան հաճախ հանդիպող, սակայն ծայրահեղ խտրականություն արտահայտող կոնցեպտն է՝ հաշմանդամությունը որպես պատիժ: Մասնավորապես, նյութերից մեկում երեխայի հաշմանդամությունը մեկնաբանվում էր որպես ծնողների երկրային մեղքերի արդյունք:

Կարևոր է անդրադառնալ նաև դիտարկված նյութերի վիզուալ կողմին: Հաշմանդամության թեմային առնչվող նյութերում անպակաս է սայլակների պատկերը. հեղինակները կարծես մոռանում են հաշմանդամության տեսակների բազմազանության մասին: Հաճախ հատուկ շեշտվում է հաշմանդամությունը, օրինակ՝ անդամահատված ոտքի ծայրատը խոշոր պլանով, թեև դա նյութի հետ կապված չէ: Որոշ նյութերում խոսվում է հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների համատեղ գործունեության մասին, բայց լուսանկարներում պատկերվում է միայնակ՝ ընկերախմբից հեռու կանգնած, հաշմանդամություն ունեցող երեխան:

Կարծրատիպային շեշտադրում է կատարվում նաև յուրահատուկ՝ տխուր երաժշտությամբ, որը կարող է զուգակցել հաշմանդամի մասին նյութը:

Դուրս են բերվել նաև պատկերի և նյութի անհամապատասխանության (օրինակ՝ խոսվում է մի անձի մասին, իսկ տեսանյութի տվյալ հատվածում պատկերվում է մեկ ուրիշը, կամ նյութը մի կազմակերպության մասին է, իսկ պատկերում՝ ուրիշ կազմակերպության կադրերն են), ինչպես նաև թյուր տեղեկատվության տրամադրման դեպքեր:

Դիտարկման ընթացքում հայտնաբերվել են նաև կարծրատիպային շեշտադրումների բազմաթիվ երևույթներ: Այդ դեպքում այս կամ այն երևույթը մեկնաբանվում է (եական չէ՝ դրական, թե բացասական ձևով) հաշմանդամության համատեքստում՝ այսինքն անձը՝ որպես առանձին արժեք, դուրս է մնում ուշադրության կենտրոնից:

Կարևոր է անդրադառնալ նաև այն ընդհանուր թեմային, որի ներքո տեղադրվում է հաշմանդամության հետ առնչվող այս կամ այն նյութը: Դիտարկված նյութերի ճնշող մեծամասնությունը զետեղված էր կայքերի «Հասարակություն» բաժնում, անկախ նրանից՝ վերաբերում էր կրթությանը, օրենքին, թե որևէ այլ բաժնին: Այսինքն, դարձյալ հաշմանդամը չի դիտարկվում որպես հասարակության լիարժեք անդամ, որը կարող է առնչվել այս կամ այն ոլորտի հետ:

Ընդհանուր առմամբ, նկատելի է թեման լսելի դարձնելու ձգտումը, սակայն արվող շեշտադրումները նյութը կարող են տանել միանգամայն այլ՝ խտրականություն արտահայտող և ձևավորող, ուղղությամբ:

## ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Առցանց լրատվության մոնիտորինգի արդյունքների վերլուծության հիման վրա «Ունիսոն» հասարակական կազմակերպության թիմը մշակեց մի շարք հանձնարարականներ, որոնք կօգնեն լրատվամիջոցներին հաշմանդամության թեմային տալ դրական, խտրականությունից զուրկ լուսաբանում: Հանձնարարականները հետաքրքիր կլինեն նաև բոլոր այն մարդկանց, որոնք այս կամ այն չափով առնչվում են ոլորտին կամ պարզապես ուզում են գրագետ լինել տվյալ հարցում:

Եվ այսպես, հաշմանդամության մասին նյութեր պատրաստելիս կարևոր է.

- Լուսաբանել հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները իրենց իրավունքների, այլ ոչ թե խղճահարության համատեքստում: Հաշմանդամություն ունեցող անձն ունի նույն իրավունքները, ինչ ցանկացած այլ քաղաքացի, և իր առջև ծառայած խնդիրը կարելի է լուծել հենց այդ իրավունքների լիարժեք իրացման միջոցով: Դրանց իրականացումը օրենսդրորեն ամրագրված կարգ է, այլ ոչ թե գրասրտության ակտ:

- Դիտարկել անձն ամբողջությամբ: Հաշմանդամությունը անձի բազմաթիվ նկարագիրներից մեկն է միայն, այլ ոչ թե ողջ էությունը: Նրա ամբողջ գործունեությունը կապված չէ միայն հաշմանդամության թեմայի հետ: Անձը կարող է ունենալ նվաճումներ կամ կատարել վատ արարքներ, որոնք ոչ մի ձև կապված չեն իր հաշմանդամության հետ:

- Մտածել կաղապարներից դուրս: Պարտադիր չէ հաշմանդամություն ունեցող անձանց ներառել միմիայն հաշմանդամության թեմայով նյութերում: Հաշմանդամություն ունեցող անձը կարող է հանդես գալ որպես փորձագետ, հյուր կամ մասնակից ցանկացած թեմայով նյութ պատրաստելիս, և միշտ չէ, որ պարտադիր է նշել, որ ձեր հյուրն ունի հաշմանդամություն, ինչպես օրինակ ամեն անգամ չէք շեշտում ձեր գրուցակցի մագերի գույնը:

- Կիրառել ճիշտ տերմինաբանություն (տե՛ս Հավելված 2): Լրագրության առաջնային գործիքը խոսքն է, այնպես որ ավելորդ է քննարկել ճշգրիտ բառերի ընտրության կարևորությունը: Այնուամենայնիվ, հիշեցնենք, որ խոսքը վերաբերմունքի ուղիղ դրսևորումն է:

- Խուսափել հաշմանդամություն ունեցող մարդկանց միակողմանի լուսաբանումից: Պատկերեք հաշմանդամներին որպես հանրության ակտիվ մաս, այլ ոչ որպես պասիվ կամ կախյալ անձանց: Հիշեք, որ դուք հանրային կարծիքի ձևավորողն եք և կարող եք մարդականց ցույց տալ հաշմանդամների ներուժը և կարողությունները:

- Երևույթի բազմակողմանի լուսաբանումը ենթադրում է նաև բազմակողմանի պատկերներ: Սայլակի պատկերի հաճախակի օգտագործումը ստեղծում է տպավորություն, որ հաշմանդամները միայն սայլակով տեղաշարժվող անձինք են: Նաև պետք չէ պատկերը հատուկ կենտրոնացնել հաշմանդամության վրա, եթե դա կապված չէ ներկայացվող նյութի հետ:

- Խուսափել անտեղի հերոսացումից: Որոշակի հաջողությունների հասած հաշմանդամություն ունեցող անձանց հերոսացումը տպավորություն է ստեղծում, որ հաշմանդամի համար այնպիսի ձեռքբերումները, ինչպիսիք են բուհ ավարտելը, արվեստով զբաղվելը կամ ընտանիք կազմելը, հերոսական նվաճումներ են, իսկ «ոչ հերոս» հաշմանդամություն ունեցող անձանց բնորոշ է մեկուսացած, պասիվ և անհաջողակ կյանքը:

- Խորհրդակցել համապատասխան կողմերի հետ: Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կազմակերպությունները և մասնագետները կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել դրական լուսաբանում ապահովելու համար:

- Խուսափել «մենք-նրանք» տարանջատումից և «ձեր նմանները» արտահայտությունից: Նույնիսկ ամենաբարի թվացող նպատակներով հաշմանդամների առանձնացումը բերում է մեկուսացման և հասարակության մեջ խմբերի արհեստական տարանջատման:

Հաշմանդամության թեմայի ճիշտ լուսաբանման համար շատ կարևոր է հասկանալ երևույթի հանդեպ հենց ձեր վերաբերմունքը: Հիշեք, որ դուք ոչ միայն ձեր անձնական կարծիքի կրողն եք, այլև հասարակության հայելի: Թեմայի ձեր ճիշտ լուսաբանումը ներառական հասարակության կառուցման կարևորագույն հիմնաքարերից է:

«Հանուն բազմազանության՝ խտրականության դեմ» ծրագրի  
 շրջանականերում իրականացվող մեդիամոնիտորինգի  
 ԴԻՏԱՐԿՄԱՆ ՔԱՐՏ

|                           |  |
|---------------------------|--|
| 1. Վերնագիր               |  |
| 2. Հրապարակման ամսաթիվ    |  |
| 3. Լրատվամիջոցի անվանում  |  |
| 4. Հղում                  |  |
| 5. Թեմա                   |  |
| 6. Տեսակ                  | 6.1 Հոդված<br>6.2 Գրառում բլոգում/սոցիալական ցանցում<br>6.3 Տեսանյութ<br>6.4 Ֆոտոշարք<br>6.5 Այլ _____   |
| 7. Ընդհանուր գնահատական   | 7.1 Լավ<br>7.2 Միջին<br>7.3 Վատ  |
| 8. Հայտնաբերված սխալներ   | 8.1 Կարծրատիպերի առկայություն<br>8.2 Կարծրատիպերի ձևավորում<br>8.3 Սխալ տերմինաբանություն<br>8.4 Վիճակագրական սխալ<br>8.5 Թյուր ինֆորմացիա<br>8.6 Կարծրատիպային պատկերներ<br>8.7 Կարծրատիպային երաժշտություն<br>8.8 Կարծրատիպային շեշտադրումներ<br>8.9 Նյութի և պատկերի նհամապատասխանություն |
| 9. Այլ մեկնաբանություններ |  |

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առցանց լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ սխալ տերմինաբանությունը առավել հաճախ հանդիպող սխալն է: Այդ պատճառով կարևոր ենք համարում ի լրումն մշակված հանձնարարականների, տեղադրել նաև ճիշտ տերմինաբանության հակիրճ ուղեցույց:

| Ճիշտ տարբերակ  | Սխալ տարբերակ   |
|--|---|
| Հաշմանդամություն ունեցող անձ, հաշմանդամ անձ  | Սահմանափակ կարողություններ ունեցող անձ, հատուկ կարիքավոր, հիվանդ, արատավոր, թերի, անլիարժեք, աննորմալ, ՀՈՒԱ, ԿԱՊԿՈՒ (համապատասխանաբար՝ «հաշմանդամություն ունեցող անձ» և «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող» արտահայտությունների անընդունելի հապավումներ) |
| Ոչ հաշմանդամ անձ, հաշմանդամություն չունեցող անձ  | Նորմալ, առողջ, սովորական, լիարժեք անձ (ի հակադրություն հաշմանդամություն ունեցող անձի)   |
| Անվասայլակով տեղաշարժվող անձ, անվասայլակ օգտագործող անձ, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձ, ողնուղեղի վնասվածք ունեցող անձ | Անվասայլակին գամված, գամվեց սայլակին, սահմանափակ ֆիզիկական կարողություններ ունեցող անձ  |
| Հաշմանդամություն, ֆունկցիոնալ խանգարում  | Արատ, դժբախտություն, թերություն   |
| Պոլիոմիելիտ ունի, պոլիոմիելիտ է տարել, պոլիոմիելիտի հետևանքով հաշմանդամություն ունի  | Տառապում է պոլիոմիելիտով կամ պոլիոմիելիտի հետևանքներից, պոլիոմիելիտի գոհ  |
| Մտավոր հաշմանդամություն ունեցող, մտավոր խնդիրներ ունեցող, զարգացման հապաղում ունեցող անձ/երեխա                               | Թերհաս, մտավոր թերի, տհաս, թերամիտ, դեբիլ, իմբեցիլ, արգելակված  |
| Դաունի համախտանիշ ունեցող անձ  | Դաուն, մոնդոլոիդ, դաունով հիվանդ, դաունով տառապող   |
| Էպիլեպսիա ունեցող անձ  | Էպիլեպտիկ, ցնցումավոր   |
| Հոգեկան/հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձ, հոգեկան խնդիրներ ունեցող անձ, հոգեկան խանգարում ունեցող անձ                | Գիժ, հոգեկան  |
| Տեսողական հաշմանդամություն ունեցող անձ, չտեսնող, վատ տեսնող, թույլ տեսողություն ունեցող անձ, կույր անձ                       | Կույր (որպես գոյական), լրիվ կույր   |
| Լսողական հաշմանդամություն ունեցող, լսողական խնդիրներ ունեցող, լսողության խանգարում ունեցող, թույլ (վատ) լսող անձ             | Խուլ-համր, խուլ (որպես գոյական)   |
| Խոսքի խանգարում ունեցող անձ  | Համր, կակազող, լալ  |
| Անձնական/մասնագիտական կյանքում հաջողությունների հասած անձ, կայացած անձ   | Հերոս, խիզախ, քաջ, հաղթահարող, ոգեշնչող, «առողջ» կամ «նորմալ» մարդկանց համար օրինակ ծառայող   |